նակին, ասել կամենալով թէ Ս. Գրիգոր և իւր նը-
ման նահատակներն աներևութաբար ուխտապահնե-
րի հետ էին, նոցա պաշտպան և նոցա ուրախակից։
Նոյն Ե. դարում Ս. Գրիգորի անունը նուիրուած
մատուռներ և եկեղեցիներ ևս կային. այսպէս օ-
րինակ Դրասխանակերտցին Յովհաննէս, Թովմա
Արծրունին և Վարդան պատմիչ որոշ յայտնում են,
որ Ս. Վարդան Մամիկոնեան Դունի մարզպանին
հալածեց, հրոյ պաշտօնեաներին պատուհասեց, բա-
գինը կործանեց և տեղը շինեց «եկեղեցի մեծ ա-
նուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի.» Նմանապէս
Փարպեցին և Ստեփաննոս Օրպէլեան յիշում են
Բագաւանի Ս. Գրիգորի մատուռը։

Այս ամէնից հետևում է, որ Ե. դարում Հայոց
մէջ արդէն զարգացած էր Ս. Լուսաւորչի յիշատա-
կը և նշխարները մեծարելու գաղափարը, որն և գործ
դրուեցաւ առաւելապէս կրօնական մաքառման ժա-
մանակ։ Թէև Ստեփաննոս Ասողիկ աւանդում է, որ
Ս. Լուսաւորչի նշխարներն յայտնուել են Վահան
Մամիկոնեանի մարզպանութեան ժամանակ, իսկ
Մխիթար Այրիվանեցին այդ դէպքը դնում է 500—
520 թուականներին, սակայն Փարպեցու խօսքերից
և վերը յիշուած բացատրութիւններից պարզ երե-
ւում է, որ այդ սխալ է։ Թերևս, ինչպէս Զամչեանն
է կարծում (Ա. 653), Ասողիկի տեղեկութիւնները
վերաբերում են Աղուանից ս. Գրիգորի նշխարաց